


ՅՈՎԷ. ԱՂՍԱՐՇԵԱՆԻՆ ԼՈՒԻՍՈՒԱՆ ԷՐԵԿՈՅ

Posted on November 3, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



մտերիմ, արուեստագետ Արա Քեչիշեանի), հեռուէն-մօտիկէն, տրտմաթախիծ ժպիտով կը հետեւէր զինք սիրողներուն եւ յարգողներուն շարժումներուն:

Հոս եւ այս առիթով, կ'արժէ Պարոյր Աղապազեանի բանախօսութեան վերջաբանը միջաբերել, որ արդէն ցոյց կու տայ Աղապազեան երգիծագիրի երգիծաբանութեան խոհուն ու խօսուն աշխարհը.

“1962ին, Հայր-Աղապազեանը ծանրօրէն հիւանդացաւ, խռովելով ոչ միայն իր ընտանեկան պարագաները, այլեւ՝ զինք սիրող եւ յարգողներու հայ թէ արաբ հսկայ գանգուած մը:

Բայց, գարմանալի թէ ոչ, ինք իր տեղէն ընդոստ վեր թռաւ ու համարեա գոռաց.

“Ետիս կորիր, Գաբրիէլ, ժամանակը չէ դեռ”:

Չեմ գ իտեր, Գաբրիէլը զինք լսեց թէ՞ իրմէ վախցաւ, կամ ալ ճիշդ նկատեց որ, “անուրախ մանկութիւն” տեսած, ընդատակեայ վիճակի մէջ ապրած, Աղապազին դէպի “վեր” տանիլը տակաւին կանուխ է:

1987ին, նոյն Գաբրիէլը եկաւ եւ ուզեց զինք տանիլ:

Յիշեցուցի իրեն ճիշդ 25 տարի առաջուան իր բողոքը, ու զայն կրկնելու հրամայականը:

Տրտմաթախիծ ժպիտով մը, բայց միշտ իր երգիծաշունչ ոգիով, ըսաւ.

“Տղա՛ս, ամէն ատեն կարելի չէ հակառակիլ Գաբրիէլ հրեշտակին, թէեւ քիչիկ մըն ալ կանուխ է, բայց ելլեմ տեսնեմ թէ հոն ի՞նչ կայ եւ ի՞նչ գ ործ կրնամ ընել հոն...”

